ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N <<ՀԳԴ-ՇՀԾՁԲ-15/3-2>>

ք. Երևան <<14>> փետրվարի 2017թ.

ՀՀ դատախազությունն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Հ. Նավասարդյանի որը գործում է ՀՀ դատախազության աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Ս-Քի-Ռ>>ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Վ. Քաղդասարյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված

հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10-օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 15259000 (տասնհինգ միլիոն երկու հարյուր հիսունինը հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25-ը դեկտեմբերի 2017թ.:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի

---

[1] Պայմանագրի օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում նախատեսվեն ֆինանսական միջոցներ և կնքվի համաձայնագիր:

իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը` այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ` համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ` բացառությամբ` Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում` պայմանով, որ` Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի` երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները` ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում` նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված` ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ դատախազություն | «Մ-Բի-Ո» ՍՊԸ |
| ք.Երևան, Վ.Սարգսյան 5 | ք. Երևան, Մյասնիկյան 22/4 |
| ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ. | «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011180081 | Հ/Հ 220083335012000 |
| ՀՎՀՀ 02506634 | ՀՎՀՀ 08417829 |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 1*
*N ՀԳԴ-ՇՀԾՁԲ-15/3-2 ծածկագրով գնման պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Ձեռքբերվող Ծառայության նկարագիր | |
|---|---|
| Մարդատար ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման SU-1, SU-2 ծառայություններ: | |
| Ծառայության մատուցման ժամկետը | |
| Սկիզբը | ավարտը |
| Պայմանագրի կնքման օրվանից | 25.12.2017թ. |

Կատարողը պարտավոր է Պատվիրատուի պահանջով տրամադրել տեղեկանք՝ Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայան ներկայացնելու օրվա և ժամի մասին:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ դատախազություն
ք.Երևան, Վ.Սարգսյան 5
ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ.
Հ/Հ 900011180081
ՀՎՀՀ 02506634
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Մ-Բի-Ռ» ՍՊԸ
ք. Երևան, Մյասնիկյան 22/4
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220083335072000
ՀՎՀՀ 08417829
(ստորագրություն)

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
## (ԳՆԱՑՈՒՑԱԿ)

Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման՝ SU-1 (տեխնիկական զննում/դիագնոստիկա), SU-2 (վերանորոգման) ծառայությունների և SU

ՀՀ դրամ

| NN | SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քանակների և այլ օժանդակ նյութերի անվանումները | 1 չափա-բաժին<br>5-տեղանոց մարդատար առջևի տանող ամ (Ֆոլկսվագեն Պասսատ 2007-2008թթ) | 2 չափա-բաժին<br>5-տեղանոց մարդատար առջևի տանող ամ (Հյունդայի Սոնատա 2011թ) | 3 չափա-բաժին<br>5-տեղանոց մարդատար հետևի տանող ամ (Մերսեդես- Բենց S430 1999թ) | 4 չափա-բաժին<br>4x4 տիպի ամենագնացներ (Հյունդայի Սանտա Ֆե 2008թ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | SU-1 ծառայությունների անվանումը | Այլ աշխատանքների արտադրության ամ | | | |
| 1 | Բռնկման համակարգի ստուգում | 100 | 100 | 100 | 100 |
| 2 | Սառեցման համակարգի ստուգում | 100 | 100 | 100 | 100 |
| 3 | Յուղման համակարգի ստուգում | 100 | 100 | 100 | 100 |
| 4 | Արտանետման համակարգի ստուգում | 100 | 100 | 100 | 100 |
| 5 | Վառելիքի համակարգի ստուգում | 100 | 100 | 100 | 100 |
| 6 | ՄՓՏ-ի ախտորոշման ստուգում | 100 | 100 | 100 | 100 |
| 7 | ԱՓՏ-ի ախտորոշման ստուգում | 100 | 100 | 100 | 100 |
| 8 | Կարդանային փոխանցման ախտորոշման ստուգում | 100 | 100 | 100 | 100 |
| 9 | Բաշխիչ տուփի ախտորոշման ստուգում | 100 | 100 | 100 | 100 |
| 10 | Առջևի և հետևի կամրջակների ախտորոշման ստուգում | 100 | 100 | 100 | 100 |
| 11 | Առջևի և հետևի կախոցների ախտորոշման ստուգում | 100 | 100 | 100 | 100 |
| 12 | Արգելակման համակարգի ախտորոշման ստուգում | 100 | 100 | 100 | 100 |
| 13 | ABS համակարգի ստուգում | 100 | 100 | 100 | 100 |
| 14 | Էլեկտրական համակարգի ախտորոշման ստուգում | 100 | 100 | 100 | 100 |
| 15 | Ղեկավարման համակարգի ախտորոշման ստուգում | 100 | 100 | 100 | 100 |
| 16 | Թափքի վիճակի ստուգում | 100 | 100 | 100 | 100 |
| 17 | Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում | 100 | 100 | 100 | 100 |
| | SU-2 ծառայությունների անվանումը | 5-տեղանոց մարդատար առջևի տանող ամ (Ֆոլկսվագեն Պասսատ 2007-2008թթ) | 5-տեղանոց մարդատար առջևի տանող ամ (Հյունդայի Սոնատա 2011թ) | 5-տեղանոց մարդատար հետևի տանող ամ (Մերսեդես- Բենց S430 1999թ) | 4x4 տիպի ամենագնացներ (Հյունդայի Սանտա Ֆե 2008թ) |
| 18 | Շարժիչի հանում տեղադրում | 40 000 | 40 000 | 40 000 | 60 000 |
| 19 | Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում | 100 | 100 | 100 | 100 |
| 20 | Նույնը [illegible] դեպքում | 100 | 100 | 100 | 100 |
| 21 | Նույնը ԱՓՏ-ի դեպքում | 100 | 100 | 100 | 100 |
| 22 | Շարժիչի վերականգնում | 90 000 | 90 000 | 90 000 | 90 000 |
| 23 | Նույնը DOHC դեպքում | 100 | 100 | 100 | 100 |
| 24 | Նույնը V6-ի դեպքում | 100 | 100 | 100 | 100 |
| 25 | Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում | 9 600 | 9 600 | 9 600 | 8 600 |
| 26 | Բլոկների կափարիչի հանում և տեղադրում | 9 600 | 9 600 | 9 600 | 8 600 |
| 27 | Նույնը աջի համար (V6) | 100 | 100 | 100 | 100 |
| 28 | Նույնը ձախի համար (V6) | 100 | 100 | 100 | 100 |
| 29 | Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում | 40 000 | 40 000 | 40 000 | 40 000 |
| 30 | Նույնը աջի համար (V6) | 100 | 100 | 100 | 100 |
| 31 | Նույնը ձախի համար (V6) | 100 | 100 | 100 | 100 |
| 32 | Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում | 12 000 | 12 000 | 12 000 | 11 000 |
| 33 | Շարժիչի գլխիկի վերանորոգում | 40 000 | 40 000 | 40 000 | 40 000 |
| 34 | Փականի խցուկի փոխարինում | 3 600 | 3 600 | 3 600 | 3 300 |
| 35 | Նույնը V6-ի դեպքում | 100 | 100 | 100 | 100 |
| 36 | Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում | 12 000 | 12 000 | 12 000 | 11 000 |
| 37 | Նույնը V6-ի ձախի դեպքում | 100 | 100 | 100 | 100 |
| 38 | Նույնը V6-ի աջի դեպքում | 100 | 100 | 100 | 100 |
| 39 | Նույնը DOHC դեպքում | 100 | 100 | 100 | 100 |
| 40 | Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում | 10 000 | 10 000 | 10 000 | 10 000 |
| 41 | Հրիչների փոխարինում SOHC | 10 000 | 10 000 | 10 000 | 10 000 |
| 42 | Նույնը DOHC դեպքում | 100 | 100 | 100 | 100 |
| 43 | Ատամնավոր փոկի փոխարինում | 20 000 | 20 000 | 20 000 | 20 000 |
| 44 | Նույնը DOHC դեպքում | 100 | 100 | 100 | 100 |
| 45 | Նույնը V6-ի դեպքում | 100 | 100 | 100 | 100 |
| 46 | Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում | 16 000 | 16 000 | 16 000 | 16 000 |
| 47 | Նույնը [illegible] դեպքում | 100 | 100 | 100 | 100 |
| 48 | Նույնը DOHC դեպքում | 100 | 100 | 100 | 100 |
| 49 | Նույնը [illegible] դեպքում | 100 | 100 | 100 | 100 |
| 50 | Նույնը V6-ի դեպքում | 100 | 100 | 100 | 100 |
| 51 | Նույնը [illegible] դեպքում | 100 | 100 | 100 | 100 |
| 52 | Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում | 20 000 | 20 000 | 20 000 | 20 000 |
| 53 | Նույնը ԱՓՏ-ի դեպքում | 100 | 100 | 100 | 100 |
| 54 | Մխոցային օղակների փոխարինում | 30 000 | 30 000 | 30 000 | 30 000 |
| 55 | Նույնը DOHC դեպքում | 100 | 100 | 100 | 100 |
| 56 | Նույնը V6-ի դեպքում | 100 | 100 | 100 | 100 |
| 57 | Թափանիվի հանում և տեղադրում | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 |
| 58 | [illegible] հանում և տեղադրում | 6 000 | 6 000 | 7 000 | 6 000 |
| | 2 Սառեցման, սնման և յուղման համակարգ | | | | |
| 59 | Ջրի և յուղի զտիչի փոխարինում | 2 000 | 2 000 | 2 000 | 2 000 |
| 60 | Ջրի պոմպի փոխարինում | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 |
| 61 | Նույնը DOHC դեպքում | 100 | 100 | 100 | 100 |
| 62 | Նույնը V6-ի դեպքում | 100 | 100 | 100 | 100 |
| 63 | [illegible] վերանորոգում | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 |
| 64 | Բռնկման կարգավորում | 1 200 | 1 200 | 1 200 | 1 200 |
| 65 | CO կարգավորում | 1 200 | 1 200 | 1 200 | 1 200 |
| 66 | Խառնարանի հանում և տեղադրում | 100 | 100 | 100 | 100 |
| 67 | Խառնարանի վերանորոգում | 100 | 100 | 100 | 100 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 68 | Օդի զտիչի փոխարինում | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 |
| 69 | Սրահի Օդի զտիչի փոխարինում | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 |
| 70 | Ինժեկտորի ծորանմխակների փոխարինում | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 |
| 71 | Ինժեկտորի ծորանմխակների մաքրում | 20 000 | 20 000 | 20 000 | 20 000 |
| 72 | Ծնկաձողի փոխարինում | 6 000 | 6 000 | 6 000 | 6 000 |
| 73 | Վառելիքի զտիչի փոխարինում | 3 000 | 3 000 | 3 000 | 3 000 |
| 74 | Վառելիքի բաքի հանում և տեղադրում | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 |
| 75 | Տրամբլյորի հանում և տեղադրում | 100 | 100 | 100 | 100 |
| 76 | Տրամբլյորի վերանորոգում | 100 | 100 | 100 | 100 |
| | 3. Սառեցման և արտածման համակարգ | | | | |
| 77 | Հովհարի փոկի հանում և տեղադրում | 500 | 500 | 500 | 500 |
| 78 | Հովհարի հանում և տեղադրում | 3 000 | 3 000 | 3 000 | 3 000 |
| 79 | Ռադիատորի հանում և տեղադրում | 7 200 | 7 200 | 7 200 | 8 800 |
| 80 | Նույնը կոնդիցիոների դեպքում | 100 | 100 | 100 | 100 |
| 81 | Նույնը ԱՓՏ-ի դեպքում | 100 | 100 | 100 | 100 |
| 82 | Ռադիատորի վերանորոգում | 15 000 | 15 000 | 15 000 | 15 000 |
| 83 | Թերմոստատի փոխարինում | 7 200 | 7 200 | 7 200 | 6 600 |
| 84 | Ջրի պոմպի փոխարինում | 10 000 | 10 000 | 10 000 | 10 000 |
| 85 | Նույնը DOHC և V-6 դեպքում | 100 | 100 | 100 | 100 |
| 86 | Նույնը կոնդիցիոների դեպքում | 100 | 100 | 100 | 100 |
| 87 | Ջրի պոմպի վերանորոգում | 500 | 500 | 500 | 500 |
| 88 | Նույնը DOHC դեպքում | 100 | 100 | 100 | 100 |
| 89 | Նույնը կոնդիցիոների դեպքում | 100 | 100 | 100 | 100 |
| 90 | Ընդարձակման բաքի փոխարինում | 2 000 | 2 000 | 2 000 | 2 000 |
| 91 | Խլարարի հանում և տեղադրում | 9 000 | 9 000 | 9 000 | 9 000 |
| 92 | Նույնը DOHC դեպքում | 100 | 100 | 100 | 100 |
| 93 | Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում | 2 000 | 2 000 | 2 000 | 2 000 |
| | 4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ | | | | |
| 94 | Ճոպան կամ գլխ գլանի հանում և տեղադրում | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 |
| 95 | Ճոպան կամ գլխ գլանի վերանորոգում | 2 000 | 2 000 | 2 000 | 2 000 |
| 96 | Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում | 12 000 | 12 000 | 12 000 | 12 000 |
| 97 | Կցորդման ոտնակի հանում և տեղադրում | 500 | 500 | 500 | 500 |
| 98 | Կցորդման ձողակի հանում և տեղադրում | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 |
| 99 | ՓՏ-ի հանում և տեղադրում | 30 000 | 30 000 | 30 000 | 30 000 |
| 100 | ՓՏ-ի վերանորոգում | 40 000 | 40 000 | 40 000 | 40 000 |
| 101 | ՓՏ-ի առանցքակալի փոխարինում | 9 000 | 9 000 | 9 000 | 9 000 |
| 102 | ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 |
| 103 | Ճանկի փոխարինում | 15 000 | 15 000 | 15 000 | 15 000 |
| 104 | Կարդանային խաչաձևի փոխարինում | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 |
| 105 | ԱՓՏ-ի կոնվերտորի հանում և տեղադրում | 40 000 | 40 000 | 40 000 | 40 000 |
| 106 | ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում | 40 000 | 40 000 | 40 000 | 40 000 |
| 107 | Նույնը V6-ի համար | 100 | 100 | 100 | 100 |
| 108 | ԱՓՏ-ի հանում և տեղադրում | 60 000 | 60 000 | 60 000 | 65 000 |
| 109 | Նույնը V6-ի համար | 100 | 100 | 100 | 100 |
| 110 | ԱՓՏ-ի վերանորոգում | 100 000 | 100 000 | 100 000 | 100 000 |
| 111 | Նույնը V6-ի համար | 100 | 100 | 100 | 100 |
| 112 | ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում | 25 000 | 25 000 | 25 000 | 25 000 |
| | 5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ | | | | |
| 113 | Բաշխիչ տուփի հանում և տեղադրում | 100 | 100 | 100 | 12 000 |
| 114 | Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով | 100 | 100 | 100 | 15 000 |
| 115 | Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում | 100 | 100 | 100 | 11 000 |
| 116 | Կարդանային լիսեռի հանում և տեղադրում | 100 | 100 | 7 000 | 7 000 |
| 117 | Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգումով | 100 | 100 | 15 000 | 15 000 |
| 118 | Կարդանային լիսեռի հենակի հանում և տեղադրում | 100 | 100 | 4 000 | 4 000 |
| 119 | Կարդանային լիսեռի միջանկյալ կախոցի հանում և տեղադրում | 100 | 100 | 6 000 | 6 000 |
| | 6 Առջևի և հետևի կամրջակներ | | | | |
| 120 | Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում | 100 | 100 | 5 000 | 5 000 |
| 121 | Առջևի կամ հետևի կամրջակի փոխանցատարի քանդում և հավաքում | 100 | 100 | 5 000 | 5 000 |
| 122 | Առջևի կամ հետևի կամրջակի ծածկոցի քանդում և հավաքում | 100 | 100 | 15 000 | 15 000 |
| 123 | Առջևի կամ հետևի կամրջակի կիսառանցքի հանում և տեղադրում | 100 | 100 | 14 400 | 16 500 |
| 124 | Կիսասռնու առանցքակալի փոխարինում | 100 | 100 | 15 000 | 15 000 |
| | 7. Կախոց | | | | |
| 125 | Առջևի կախոցի մեխանիզմի քանդում և հավաքում | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 |
| 126 | Ցնցակլանի հանում և տեղադրում | 500 | 500 | 500 | 500 |
| 127 | Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում | 7 200 | 7 200 | 600 | 8 800 |
| 128 | Անվակունդի առանցքակալի փոխարինում | 12 000 | 12 000 | 12 000 | 13 200 |
| 129 | Նույնը հետին սռնու ավտ-երի համար | 100 | 100 | 100 | 100 |
| 130 | Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում | 500 | 500 | 500 | 500 |
| 131 | Նույնը հետին սռնու ավտ-երի համար | | | 100 | 100 |
| 132 | Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում | 7 200 | 7 200 | 7 200 | 8 800 |
| 133 | Ձախ կամ աջ հոդակապի առանցքակալների փոխարինում | 7 200 | 7 200 | 7 200 | 8 800 |
| 134 | Ցնցակլանիչի բաժակի փոխարինում | 6 000 | 6 000 | 6 000 | 5 600 |
| 135 | Զսպանակի հանում և տեղադրում | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 |
| 136 | Զսպանի հանում և տեղադրում | | | | 1 000 |
| 137 | Զսպանի վռանների փոխարինում | | | | 1 000 |
| 138 | Առջևի ցնցակլանիչի հանում և տեղադրում | 6 000 | 6 000 | 6 000 | 6 000 |
| 139 | Ներքևի լծակի հանում տեղադրում | 6 000 | 6 000 | 6 000 | 6 000 |
| 140 | Ներքևի լծակի վռանների փոխարինում | 10 800 | 10 800 | 10 800 | 12 100 |
| 141 | Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում | 10 800 | 10 800 | 10 800 | 12 100 |
| 142 | Միջին ձգանի հանում և տեղադրում | 1 200 | 1 200 | 6 000 | 7 700 |
| 143 | Ծռմանակայուն լծակի հանում և տեղադրում | 1 200 | 1 200 | 1 200 | 1 200 |
| 144 | Վերին լծակի հանում և տեղադրում | 18 000 | 18 000 | 18 000 | 18 000 |
| 145 | Վերին լծակի վռանների փոխարինում | 15 000 | 15 000 | 15 000 | 15 000 |
| 146 | Գնդե հոդակապերի փոխարինում | 6 000 | 6 000 | 6 000 | 7 700 |
| 147 | Ծայրակալների հանում և տեղադրում | 7 200 | 7 200 | 7 200 | 13 200 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 229 | Անիվի փակ | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 |
| 230 | CO-գազային ախտորոշումներ, գին 1 քառ ամ-ի համար | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 |
| 231 | Խառնարանի ախտորոշումներ, գին 1մ համար | 4 000 | 4 000 | 4 000 | 4 000 |
| 232 | Փականամատների ախտորոշումներ, գին 1մ համար | 4 000 | 4 000 | 4 000 | 4 000 |
| 233 | Դինամոմետր տրամաչափում | 20 000 | 20 000 | 20 000 | 20 000 |
| | **Ընդամենը ծառայություններ** | 1 470 000 | 1 470 000 | 1 555 000 | 1 534 000 |
| | ՏՍ-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները | 5-տեղանոց մարդատար սեդան տիպի ամ (Ֆոլկսվագեն Պասսատ 2007-2008թթ) | 5-տեղանոց մարդատար սեդան տիպի ամ (Հյունդայի Սոնատա 2011թ) | 5-տեղանոց մարդատար հետչի տիպի ամ (Մերսեդես-Բենց S430 1999թ) | 4x4 տիպի ամենագնացներ (Հյունդայի Սանտա Ֆե 2008թ) |
| | | Այլ պետությունների արտադրության ամ | | | |
| | 1. Շարժիչ | | | | |
| 1 | Շարժիչի բլոկ | 102 000 | 102 000 | 102 000 | 102 000 |
| 2 | Շարժիչի գլխիկ | 70 000 | 70 000 | 70 000 | 70 000 |
| 3 | Բարձիկ | 40 000 | 40 000 | 40 000 | 38 500 |
| 4 | Շարժիչի գլխիկի միջադիր | 30 000 | 30 000 | 32 400 | 27 500 |
| 5 | Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ | 6 000 | 6 000 | 5 000 | 5 500 |
| 6 | Շարժիչի բաշխիչ լիսեռ | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 |
| 7 | Շարժիչի փական դուրս մղող | 8 400 | 8 400 | 8 400 | 7 700 |
| 8 | Շարժիչի փական ներս մղող | 8 400 | 8 400 | 8 400 | 7 700 |
| 9 | Շարժիչի փականի խցուկ | 2 400 | 2 400 | 2 400 | 2 200 |
| 10 | Ծնկաձև լիսեռ | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 |
| 11 | Ծնկաձև լիսեռի խցուկ առջևի | 12 000 | 12 000 | 12 000 | 11 000 |
| 12 | Ծնկաձև լիսեռի խցուկ հետևի | 18 000 | 18 000 | 18 000 | 16 500 |
| 13 | Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ | 40 000 | 40 000 | 40 000 | 40 000 |
| 14 | Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ | 40 000 | 40 000 | 40 000 | 40 000 |
| 15 | Ճնշակային տափօղակ | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 |
| 16 | Մխոց | 24 000 | 24 000 | 30 000 | 22 000 |
| 17 | Մխոցային օղակներ | 70 000 | 70 000 | 70 000 | 70 000 |
| 18 | Առանցքակալ | 24 000 | 24 000 | 24 000 | 22 000 |
| 19 | Առանցքակալի մուֆ | 30 000 | 30 000 | 30 000 | 30 000 |
| 20 | Շղթա | 30 000 | 30 000 | 30 000 | 30 000 |
| 21 | Շղթայաձգան | 30 000 | 30 000 | 24 000 | 22 000 |
| 22 | Գոտի | 9 600 | 9 600 | 9 600 | 8 800 |
| 23 | Գոտեձգիչ | 15 000 | 15 000 | 15 000 | 15 000 |
| 24 | Ջրապոմպ | 12 000 | 12 000 | 12 000 | 12 000 |
| 25 | Ջերմակարգավար | 15 000 | 15 000 | 15 000 | 15 000 |
| 26 | Թափանիվ | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 |
| 27 | Թափանիվի պսակ | 500 | 500 | 500 | 500 |
| 28 | Խցուկ բաշխիչ լիսեռի | 8 400 | 8 400 | 8 400 | 7 700 |
| 29 | Ծխնի | 500 | 500 | 500 | 500 |
| 30 | Շարժաթև | 500 | 500 | 500 | 500 |
| 31 | Կարտերի միջադիր | 15 000 | 15 000 | 15 000 | 15 000 |
| 32 | Միջադիր | 4 800 | 4 800 | 3 600 | 6 600 |
| 33 | Տուրբոլիցքավորիչ | 25 000 | 25 000 | 25 000 | 25 000 |
| | 2. Ներարկման, սնման և լուսային համակարգ | [redacted] | | | |
| 34 | Յուղ շարժիչի համար, 1լիտր | 2 500 | 2 500 | 2 500 | 2 500 |
| 35 | Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1լիտր | 4 000 | 4 000 | 4 000 | 4 000 |
| 36 | Յուղ շարժիչի սինթետիկ, 1լիտր | 7 000 | 7 000 | 7 000 | 7 000 |
| 37 | Յուղի զտիչ | 8 000 | 8 000 | 8 000 | 8 000 |
| 38 | Յուղի պոմպ | 40 000 | 40 000 | 40 000 | 40 000 |
| 39 | Յուղի պոմպի շարժաբեր | 500 | 500 | 500 | 500 |
| 40 | Յուղի ռադիատոր | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 |
| 41 | Յուղի փողրակ | 500 | 500 | 500 | 500 |
| 42 | Յուղի ծորակ | 500 | 500 | 500 | 500 |
| 43 | Կարտերի մոմ | 8 000 | 8 000 | 8 000 | 8 000 |
| 44 | Ծծողապար | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 |
| 45 | Խլացուցիչ | 500 | 500 | 500 | 500 |
| 46 | Խլացուցիչի վերանորոգման հավաքածու | 100 | 100 | 100 | 100 |
| 47 | Ինժեկտորի ծորանակներ | 15 000 | 15 000 | 15 000 | 15 000 |
| 48 | Վառելանյութի մղիչ էլեկտրական | 60 000 | 60 000 | 60 000 | 60 000 |
| 49 | Վառելանյութի մղիչ մեխանիկական | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 |
| 50 | Վառելանյութի զտիչ | 15 000 | 15 000 | 15 000 | 15 000 |
| 51 | Վառելանյութի զտիչի նուրբ մաքրման | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 |
| 52 | Վառելանյութի մակարդիչ | 6 000 | 6 000 | 6 000 | 6 000 |
| 53 | Աքսելերատորի ճոպան | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 |
| 54 | Օդի զտիչ | 10 000 | 10 000 | 10 000 | 10 000 |
| 55 | Սալոնի օդի զտիչ | 11 000 | 11 000 | 11 000 | 11 000 |
| 56 | Ջերմաստիճանային տվիչ | 15 000 | 15 000 | 15 000 | 15 000 |
| 57 | Յուղի տվիչ | 14 000 | 14 000 | 14 000 | 14 000 |
| 58 | Բաշխիչ լիսեռի տվիչ | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 |
| 59 | Օդի ծախսի տվիչ | 50 000 | 50 000 | 50 000 | 50 000 |
| 60 | Արագաչափի տվիչ | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 |
| 61 | Հարվածի տվիչ | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 |
| 62 | Ջրի տվիչ | 500 | 500 | 500 | 500 |
| 63 | Բենզոբաքի տվիչ | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 |
| 64 | Սառման ընթացքի տվիչ | 500 | 500 | 500 | 500 |
| 65 | Սահման ընթացքի տվիչ | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 |
| 66 | Բռնկման համակարգ | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 |
| 67 | Պարապ ընթացքի տվիչ | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 |
| 68 | Դրոսելային փականի տվիչ | 2 000 | 2 000 | 2 000 | 2 000 |
| 69 | Թթվածնի տվիչ | 12 000 | 12 000 | 12 000 | 12 000 |
| | 3. Սառեցման և արտանետման համակարգ | [redacted] | | | |
| 70 | Հովհարի փոկ | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 |
| 71 | Հովհար | 25 000 | 25 000 | 25 000 | 25 000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 72 | Ռադիատոր | 96 000 | 96 000 | 96 000 | 96 000 |
| 73 | Ընդարձակիչ բաք | 20 000 | 20 000 | 20 000 | 20 000 |
| 74 | Ռադիատորի փողրակ | 12 000 | 12 000 | 12 000 | 12 000 |
| 75 | Թերմոստատ | 10 000 | 10 000 | 10 000 | 10 000 |
| 76 | Ջրի պոմպ | 30 000 | 30 000 | 30 000 | 30 000 |
| 77 | Ջրի պոմպի առանցքակալ | 600 | 600 | 600 | 600 |
| 78 | Ջրի պոմպի փական | 600 | 600 | 600 | 600 |
| 79 | Սառեցման հեղուկ 1 լիտր | 2 000 | 2 000 | 2 000 | 2 000 |
| 80 | Ջրի պոմպի ատամնիվ | 600 | 600 | 600 | 600 |
| 81 | Հովհար | 20 000 | 20 000 | 20 000 | 20 000 |
| 82 | Փոկ | 13 000 | 13 000 | 13 000 | 13 000 |
| 83 | Փոկ կոնդիցիոների | 2 000 | 2 000 | 2 000 | 2 000 |
| 84 | Ծորակ | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 |
| 85 | Խլացուցիչի ներդիր | 4 000 | 4 000 | 4 000 | 4 000 |
| 86 | Խլացուցիչի կախոց | 4 000 | 4 000 | 4 000 | 4 000 |
| 87 | Կոլեկտոր | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 |
| 88 | Անոր (կատալիզատոր) | 800 | 800 | 800 | 800 |
| 89 | Խլացուցիչ | 60 000 | 60 000 | 60 000 | 60 000 |
| 90 | Ռեզոնատոր | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 |
| 91 | Վառարանի ռադիատոր | 60 000 | 60 000 | 60 000 | 60 000 |
| | 4.Կցորդում, ՓՏ և ԱՓՏ | | | | |
| 92 | Կցորդման բանվորական գլան | 4 000 | 4 000 | 4 000 | 4 000 |
| 93 | Կցորդման գլխավոր գլան | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 |
| 94 | Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 |
| 95 | Կցորդման ճնշող սկավառակ | 25 000 | 25 000 | 25 000 | 25 000 |
| 96 | Կցորդման տարվող սկավառակ | 20 000 | 20 000 | 20 000 | 20 000 |
| 97 | Կցորդման առանցքակալ | 10 000 | 10 000 | 10 000 | 10 000 |
| 98 | Կցորդման փողրակ | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 |
| 99 | Փոխանցման տուփ | 20 000 | 20 000 | 20 000 | 20 000 |
| 100 | ՓՏ-ի առջևի խցուկ | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 |
| 101 | ՓՏ-ի հետևի խցուկ | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 |
| 102 | ՓՏ-ի առանցքակալ | 13 000 | 13 000 | 13 000 | 13 000 |
| 103 | ՓՏ-ի առաջնային լիսեռ | 10 000 | 10 000 | 10 000 | 10 000 |
| 104 | ՓՏ-ի միջանկյալ լիսեռ | 10 000 | 10 000 | 10 000 | 10 000 |
| 105 | ՓՏ-ի նեցուկ | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 |
| 106 | ՓՏ-ի ատամնանիվ | 15 000 | 15 000 | 15 000 | 15 000 |
| 107 | Համաժամիչ | 10 000 | 10 000 | 10 000 | 10 000 |
| 108 | Սուֆլո | 25 000 | 25 000 | 25 000 | 25 000 |
| 109 | ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ | 500 | 500 | 500 | 500 |
| 110 | ԱՓՏ-ի զտիչ | 25 000 | 25 000 | 25 000 | 25 000 |
| 111 | ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու | 70 000 | 70 000 | 70 000 | 70 000 |
| 112 | ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ | 30 000 | 30 000 | 30 000 | 30 000 |
| 113 | Տրանսմիսիայի յուղ, 1 լիտր | 4 000 | 4 000 | 4 000 | 4 000 |
| 114 | ԱՓՏ յուղ, 1 լիտր | 7 000 | 7 000 | 7 000 | 7 000 |
| 115 | ՓՏ-ի առաջնային լիսեռ | 100 | 100 | 100 | 100 |
| 116 | Ճանկ | 30 000 | 30 000 | 30 000 | 30 000 |
| 117 | Հոլովակ | 2 000 | 2 000 | 2 000 | 2 000 |
| | 5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ | | | | |
| 118 | Բաշխիչ տուփ | 100 | 100 | 100 | 5 000 |
| 119 | Բաշխիչ տուփի խցուկ | 100 | 100 | 100 | 5 000 |
| 120 | Բաշխիչ տուփի առանցքակալ | 100 | 100 | 100 | 10 000 |
| 121 | Բաշխիչ տուփի ատամնանիվ | 100 | 100 | 100 | 20 000 |
| 122 | Բաշխիչ տուփի լիսեռ | 100 | 100 | 100 | 20 000 |
| 123 | Կարդանային լիսեռ | 100 | 100 | 60 000 | 60 000 |
| 124 | Էլաստիկ մուֆտա | 100 | 100 | 40 000 | 40 000 |
| 125 | Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ | 100 | 100 | 5 000 | 5 000 |
| 126 | Կարդանային լիսեռի խաչուկ | 100 | 100 | 18 000 | 18 000 |
| | 6. Առջևի կամ հետևի կամրջակներ | | | | |
| 127 | Հետևի կամ առջևի կամրջակ | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 |
| 128 | Ռեդուկտոր | 1 200 | 1 200 | 30 000 | 30 000 |
| 129 | Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ | 1 200 | 1 200 | 30 000 | 30 000 |
| 130 | Դիֆֆերենցիալ | 20 000 | 20 000 | 20 000 | 20 000 |
| 131 | Դիֆֆերենցիալի սատելիտ | 24 000 | 24 000 | 24 000 | 24 000 |
| 132 | Տանող ատամնանիվի խցուկ | 1 200 | 1 200 | 1 200 | 1 200 |
| 133 | Տանող ատամնանիվի առանցքակալ | 1 200 | 1 200 | 1 200 | 1 200 |
| 134 | Դիֆֆերենցիալի առանցքակալ | 15 000 | 15 000 | 15 000 | 15 000 |
| 135 | Կիսասռնի | 100 | 100 | 70 000 | 70 000 |
| 136 | Կիսասռնու առանցքակալ | 100 | 100 | 20 000 | 20 000 |
| 137 | Կիսասռնու միջադիր | 100 | 100 | 4 800 | 4 400 |
| 138 | Կիսասռնու խցուկ | 100 | 100 | 6 000 | 5 500 |
| 139 | Կարդանիկների սահմռուկ | 100 | 100 | 4 800 | 4 400 |
| | 7. Կախոց | | | | |
| 140 | Ցնցամեղմիչ | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 |
| 141 | Կրոնշտեյն | 2 000 | 2 400 | 2 400 | 2 200 |
| 142 | Ձախ կամ աջ հոդակապ | 90 000 | 90 000 | 50 000 | 90 000 |
| 143 | Ձախ կամ աջ հոդակապի փոշեծածկոց | 15 000 | 15 000 | 15 000 | 15 000 |
| 144 | Անվակունդ | 40 000 | 40 000 | 40 000 | 40 000 |
| 145 | Անվակունդի խցուկ | 3 000 | 3 000 | 3 000 | 3 000 |
| 146 | Անվակունդի ներքին առանցքակալ | 30 000 | 30 000 | 30 000 | 30 000 |
| 147 | Անվակունդի արտաքին առանցքակալ | 20 000 | 20 000 | 20 000 | 20 000 |
| 148 | Հետևի անվակունդի ներքին առանցքակալ | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 |
| 149 | Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ | 500 | 500 | 500 | 600 |
| 150 | Ձախ կամ աջ հոդակապի խցուկ | 6 000 | 6 000 | 6 000 | 7 700 |
| 151 | Հարվածամեղմիչի բաժակ | 20 000 | 20 000 | 20 000 | 20 000 |
| 152 | Զսպանակ | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 153 | Առջևի հարվածամեղմիչ | 65 000 | 65 000 | 54 000 | 75 000 |
| 154 | Հարվածամեղմիչի փոշեծածկոց | 1 200 | 1 200 | 1 200 | 1 100 |
| 155 | Հարվածամեղմիչի վտան | 600 | 600 | 600 | 550 |
| 156 | Ներքևի լծակ | 40 000 | 40 000 | 40 000 | 40 000 |
| 157 | Ներքևի լծակի վտան | 7 200 | 7 200 | 7 200 | 6 600 |
| 158 | Վերևի լծակ | 30 000 | 30 000 | 30 000 | 30 000 |
| 159 | Վերևի լծակի վտան | 7 200 | 7 200 | 7 200 | 6 600 |
| 160 | Գնդի հոդակապ | 18 000 | 18 000 | 18 000 | 16 500 |
| 161 | Առջևի կայունարար | 24 000 | 24 000 | 24 000 | 22 000 |
| 162 | Առջևի կայունարարի վտան | 9 600 | 9 600 | 9 600 | 8 800 |
| 163 | Առջևի կայունարարի ատքի վտան | 6 000 | 6 000 | 6 000 | 5 500 |
| 164 | Հետևի զսպանակ | 500 | 500 | 500 | 500 |
| 165 | Հետևի ցնցամեղմիչ | 42 000 | 42 000 | 42 000 | 49 500 |
| 166 | Հետևի մետաղաձող (շտանգա) | 18 000 | 18 000 | 18 000 | 22 000 |
| 167 | Հետևի մետաղաձող (շտանգա) վտան | 9 600 | 9 600 | 9 600 | 11 000 |
| 168 | Հետևի անկյունագծային լծակ | 1 200 | 1 200 | 1 200 | 1 100 |
| 169 | Անկյունագծային լծակի վտան | 1 200 | 1 200 | 1 200 | 1 100 |
| 170 | Ձգաձող (ռեակտիվ) | 1 200 | 1 200 | 1 200 | 1 100 |
| 171 | Ձգաձողի վտան | 600 | 600 | 600 | 550 |
| 172 | Ձգաձողի միջադիր | 600 | 600 | 600 | 550 |
| 173 | Ձգաձողի բռնիչ | 600 | 600 | 600 | 550 |
| 174 | Աջ կամ ձախ ձգան | 18 000 | 18 000 | 18 000 | 16 500 |
| 175 | Ծայրակալ | 18 000 | 18 000 | 18 000 | 16 500 |
| 176 | Ղեկի մեխանիզմ | 6 000 | 6 000 | 6 000 | 6 000 |
| 177 | Անվահեծ, ձեռնակոճ | 25 000 | 25 000 | 25 000 | 25 000 |
| 178 | Կարդանային կախիչային առջևի | 16 000 | 16 000 | 16 000 | 16 000 |
| 179 | Կարդանային կախիչային հետևի | 14 000 | 14 000 | 14 000 | 14 000 |
| | 8. Ղեկային մեխանիզմ | [redacted] | [redacted] | [redacted] | [redacted] |
| 180 | Ղեկային կայուն | 50 000 | 50 000 | 50 000 | 50 000 |
| 181 | Ղեկային կայունի առանցքակալ | 1 200 | 1 200 | 1 200 | 1 100 |
| 182 | Ղեկային կայունի խաչուկ | 1 200 | 1 200 | 1 200 | 1 100 |
| 183 | Հիդրոուժեղարար | 50 000 | 50 000 | 50 000 | 50 000 |
| 184 | Հիդրոուժեղարարի փոկ | 9 600 | 9 600 | 9 600 | 8 800 |
| 185 | Հիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ | 20 000 | 20 000 | 20 000 | 19 800 |
| 186 | Հիդրոուժեղարարի պոմպ | 42 000 | 42 000 | 42 000 | 38 500 |
| 187 | Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ | 9 600 | 9 600 | 9 600 | 8 800 |
| 188 | Ղեկային ձող | 24 000 | 24 000 | 24 000 | 22 000 |
| 189 | Ղեկային ձողի ծայրակալ | 9 600 | 9 600 | 9 600 | 8 800 |
| 190 | Հիդրոուժեղարարի յուղ 1 լիտր | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 |
| 191 | Ծոծանակ | 100 | 100 | 100 | 100 |
| 192 | Ծոծանակի վտան | 100 | 100 | 100 | 100 |
| | 7. Արգելակային համակարգ | [redacted] | [redacted] | [redacted] | [redacted] |
| 193 | Գլխ. գլան | 2 000 | 2 000 | 2 000 | 2 000 |
| 194 | Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 |
| 195 | Վակուումային ուժեղարար | 50 000 | 50 000 | 50 000 | 50 000 |
| 196 | Բանվ. գլան | 2 000 | 2 000 | 2 000 | 2 000 |
| 197 | Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ | 500 | 500 | 500 | 500 |
| 198 | Արգելակային մղոցակ | 6 000 | 6 000 | 6 000 | 6 000 |
| 199 | Սուպպորտի ուղղորդիչ | 2 000 | 2 000 | 2 000 | 2 000 |
| 200 | Սուպպորտի մխոցներ | 2 000 | 2 000 | 2 000 | 2 000 |
| 201 | Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ | 30 000 | 30 000 | 30 000 | 30 000 |
| 202 | Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ | 28 000 | 28 000 | 28 000 | 28 000 |
| 203 | Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ | 30 000 | 30 000 | 30 000 | 30 000 |
| 204 | Առջևի արգելակային սկավառակ | 36 000 | 36 000 | 36 000 | 36 000 |
| 205 | Հետևի արգելակային սկավառակ | 36 000 | 36 000 | 36 000 | 36 000 |
| 206 | Ձեռքի արգելակային ճոպան | 12 000 | 12 000 | 12 000 | 12 000 |
| 207 | ABS-ի տվիչ | 15 000 | 15 000 | 15 000 | 15 000 |
| 208 | Արգելակային հեղուկ DOT-3 - 800գրամ | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 |
| 209 | Արգելակային հեղուկ DOT-4 - 800գրամ | 2 000 | 2 000 | 2 000 | 2 000 |
| 210 | Ձեռքի արգելակային ճոպան | 100 | 100 | 100 | 100 |
| | 9. Էլեկտրասարքավորում | [redacted] | [redacted] | [redacted] | [redacted] |
| 211 | Գեներատոր | 110 000 | 110 000 | 110 000 | 110 000 |
| 212 | Գեներատորի դիոդային կամրջակ | 33 000 | 33 000 | 33 000 | 33 000 |
| 213 | Գեներատորի ռելե | 22 000 | 22 000 | 22 000 | 22 000 |
| 214 | Գեներատորի առանցքակալ | 12 000 | 12 000 | 12 000 | 11 000 |
| 215 | Ստարտեր | 100 000 | 100 000 | 100 000 | 100 000 |
| 216 | Ստարտերի ռելե | 6 000 | 6 000 | 6 000 | 5 500 |
| 217 | Ստարտերի ատամիվ | 6 000 | 6 000 | 6 000 | 5 500 |
| 218 | Բենդիքս | 25 000 | 25 000 | 25 000 | 25 000 |
| 219 | Ստարտերի կցորդիչ (ավտոմատ) | 25 000 | 25 000 | 25 000 | 25 000 |
| 220 | Առջևի լապտեր | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 |
| 221 | Առջևի ապակի | 15 000 | 15 000 | 15 000 | 15 000 |
| 222 | Հետևի լապտեր | 15 000 | 15 000 | 15 000 | 15 000 |
| 223 | Հետևի ապակի | 18 000 | 18 000 | 18 000 | 18 000 |
| 224 | Արգելակման լապտեր | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 |
| 225 | Լամպ | 5 600 | 5 600 | 5 600 | 8 300 |
| 226 | Էլեկտրական անջատիչ | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 |
| 227 | Էլեկտրական տվիչ | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 |
| 228 | Էլեկտրական լարերի սարք | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 |
| 229 | Բռնկման կոճակ | 2 000 | 2 000 | 2 000 | 2 000 |
| 230 | Էլեկտրասարքերի պահպանիչի խումբ | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 |
| 231 | Էլեկտրասարքերի ենթակայանի խումբ | 4 200 | 4 900 | 4 400 | 4 700 |
| 232 | Վառոցքային լարերի խումբ | 25 000 | 25 000 | 25 000 | 35 000 |
| 233 | Վառոցքի մոմի ծայրակալ | 8 000 | 8 000 | 8 000 | 8 000 |
| 234 | Վառոցքային | 100 | 100 | 100 | 100 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 235 | [illegible] | 100 | 100 | 100 | 100 |
| 236 | Արագաչափի | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 |
| 237 | Ազդանշան | 3 600 | 3 600 | 3 600 | 3 400 |
| 238 | Դիմապակի | 65 000 | 65 000 | 65 000 | 65 000 |
| 239 | Ապակեմաքրիչ | 3 000 | 3 000 | 3 000 | 3 000 |
| 240 | Ապակեմաքրիչի շարժիչ | 5 000 | 5 000 | 5 000 | 5 000 |
| 241 | Դռների կենտրոնական փական | 2 000 | 2 000 | 2 000 | 2 000 |
| 242 | Ազդանշանային համակարգ | 18 000 | 18 000 | 18 000 | 18 000 |
| 243 | Մագնիտոլա | 2 000 | 2 000 | 2 000 | 2 000 |
| 244 | Էլեկտրապատուհան | 9 000 | 9 000 | 9 000 | 9 000 |
| 245 | Էլեկտրապատուհանի շարժիչ | 3 000 | 3 000 | 3 000 | 3 000 |
| 246 | Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր գին 1դմ վերանորոգման համար | 5 000 | 5 000 | 5 000 | 3 000 |
| **Ընդամենը պահեստամասեր, քսայուղեր, նյութեր** | | 3 465 000 | 3 466 000 | 3 701 000 | 3 804 000 |
| **Ընդամենն ըստ խմբաքանակի** | | 4 935 000 | 4 936 000 | 5 256 000 | 5 438 000 |

** Նշված փոխանակվողների ծառայության տեսակ չի համընկնում*

1. Ծառայությունները պետք է մատուցվեն Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայանում գրանցվելու օրվանից՝ չորս օրացուցային օրվա ընթացքում, եթե Պատվիրատուի համաձայնությամբ, ավելի երկար ժամկետ սահմանված չէ:

2. Սպասարկման ենթակա ավտոմեքենաները, որոնց միաժամանակյա քանակը կարող է լինել մինչև 10 պետք է պահպանվեն փակ, տանիքածածկ, հսկվող տարածքում:

3. Ավտոմեքենաների սպասարկումը, որոնց քանակը միաժամանակ կարող է լինել մինչև 5, պետք է սպասարկվեն առանձին դիտահորերով կամ ամբարձիչներով մեկ փուլում:

4. Խափանված մեքենայի մասին տեղեկություն ստանալուց հետո Կատարողը պարտավոր է Երևան քաղաքից 4 ժամվա, իսկ մարզերից և ԼՂՀ-ից 8 ժամվա ընթացքում իր միջոցներով, քարշակով մեքենան տեղափոխել վերանորոգման կայան:

6. Արտադրամասային աշխատանքների մեքենաների շարժիչների կապիտալ վերանորոգման **երաշխիքային ժամկետը՝ 12 ամիս**, փոխանցման տուփերի, կամրջակների և ղեկային կայանի կապիտալ վերանորոգման **երաշխիքային ժամկետը՝ 6 ամիս:**
7. Կատարողը պետք է անհրաժեշտության դեպքում սպասարկում իրականացնի նաև Սյունիքի մարզի Գորիս քաղաքում:

| | |
|---|---|
| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Մ-Բի-Ռի» ՍՊԸ |
| ք.Երևան, Վ.Սարգսյան 5 | ք. Երևան, Մյասնիկյան 22/4 |
| ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ. | «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011180081 | Հ/Հ [illegible] |
| ՀՎՀՀ 02506634 | ՀՎՀՀ 08417829 |

Հավելված 2
N ՀԳԴ-ՇՀԾՁԲ-15/3-2 ծածկագրով գնման պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

հազար ՀՀ դրամ

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.` ըստ որում | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | I եռամսյակ | II եռամսյակ | III եռամսյակ | IV եռամսյակ | Ընդամենը Տարի |
| 1. | Մարդատար ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման SU-1, SU-2 ծառայություններ | 1575.9 | 5615.65 | 8055.4 | 15259.0 | 15259.0 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ դատախազություն
ք.Երևան, Վ.Սարգսյան 5
ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ.
Հ/Հ 900011180081
ՀՎՀՀ 02506634

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Մ-Բի-Ռ» ՍՊԸ
ք. Երևան, Մյասնիկյան 22/4
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 2200833350012000
ՀՎՀՀ 08417829

(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված 3*
*N ՀԳԴ-ԸՀԾՁԲ-15/3-2 ծածկագրով գնման պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ______________ | գտնվելու վայրը ______________ |
| հh ______________________ | hh ______________________ |
| ______________________ | ______________________ |
| hվhh ______________________ | hվhh ______________________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

§ ¦§ ¦ 20 Ã.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ______________________________________________

______________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ ի դեմս ______________________________________________ և
Պայմանագրի կողմը ի դեմս ______________________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*N ՀԳԴ-ՇՀԾՁԲ-15/3-2 ծածկագրով գնման պայմանագրի*

# ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ --------------------------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
------------------------------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. -------- -ին կնքված N ----------------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ----------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| Անվանումը | Քանակական ցուցանիշը (փաստացի) | Չափի միավորը |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

Հանձնեց

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն